ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-03

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 3 նիստի

1-ը նոյեմբերի 2023թ.

Ս.թ. նոյեմբերի 01-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի փաստաթղթային փուլի ավարտի հաստատում, հայտերի հաստատում կամ մերժում
2. Հարցազրույցի անցկացման վայրի և ժամկետի սահմանում,
3. Հարցազույցի տևողության սահմանում և հավակնորդների հարցազրույցի փուլի հերթացուցակի սահմանում

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին չորսը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Արմինե Թումասյանը, Նինա Փիրումյանը, Արմեն Ասատրյանը: Նիստը վարում էր՝ Արուսյակ Ջուլհակյանը:

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա.Ջուլհակյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար հավակնորդների փաստաթղթերը, որը տրամադրվել էր մրցութային խորհրդին: Մրցույթի համար դիմել են հինգ հավակնորդ: Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդներ Նարինե Ավետիսյանի, Հայկուհի Հարությունյանի և Հովհաննես Նալբանդյանի հայտերը ներկայացված փաթեթների ամբողջականության վերաբերյալ դիտողություններ չեն եղել Խորհրդի անդամների կողմից:

Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել մրցույթի փաստաթղթային փուլի ավարտը և հաստատեց հայտերը, ըստ որի մրցույթի հարցազրույցի փուլ են անցնում հավակնորդներ Նարինե Ավետիսյանը, Հայկուհի Հարությունյանը և Հովհաննես Նալբանդյանը:* *Կողմ 4, դեմ 0*
	Հաշվի առնելով, որ Խաչիկ Խոջայանի ներկայացրած դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությամբ չէր հաստատվել վերջինիս կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու փաստը, բացակայում էր հայալեզու ինքնակենսագրականը, ինչպես նաև չէր ներկայացվել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին 30.05.2019թ. ՀՀ կառավարության 685-Ն որոշման 3-րդ հավելվածի 2.1-րդ և. 3-րդ կետերով սահմանված փաստաթղթերը նարկոլոգիական և հոգեկան հիվանդությունների բացակայության վերաբերյալ, խորհուրդը առաջարկել է Խաչիկ Խոջայանին հիշյալ փաստաթղթերը ներկայացնել մինչև 31.10.2023թ.:
Խորհրդի որոշումը	*Խաչիկ Խոջայանը սահմանված ժամկետում չի վերացրել իր փաստաթղթերում առկա թերությունները, ուստի խորհուրդը որոշեց Խաչիկ Խոջայանի հայտի ընդունումը մերժել:* *Կողմ 4, դեմ 0*
	Ա.Ջուլհակյանը տեղեկացրեց, որ հավակնորդ Կարեն Հակոբյանը 01.11.2023թ. դիմել է Մրցութային խորհրդին և խնդրել չեղարկել իր հայտը և վերադարձնել իր 25.10.2023թ. ներկայացրած դիմումը և կից փաստաթղթերը:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց վերադարձնել Կարեն Հակոբյանի դիմումը և իր կից փաստաթղթերը:* *Կողմ 4, դեմ 0*
Օրակարգի 2-րդ հարց	Քանի որ Խորհրդի նիստերի անցկացման վայրը օրենքով սահմանված է ԱԺ շենքը, ուստի առաջարկվեց հարցազրույցը անցկացնել ԱԺ վարչական շենքում: Հարցազրույցը առաջարկվեց անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում:
	Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հարցազրույցը անցկացնել ԱԺ վարչական շենքում: Հարցազրույցը որոշվեց անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում: *Կողմ 4 դեմ 0*

Օրակարգի 3-րդ հարց	Առաջարկվեց յուրաքանչյուր հավակնորդի համար հարցազույցի տևողությունը սահմանել 1 ժամ, իսկ հերթականությունը՝ ըստ դիմումները ներկայացնելու ժամանակագրության կամ այբբենական կարգով:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց յուրաքանչյուր հավակնորդի համար հարցազույցի տևողությունը սահմանել 1 ժամ, իսկ հերթականությունը՝ ըստ այբբենական կարգի:* *Կողմ 4, դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Ջուլհակյանը

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան